

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Գլխավոր ասամբլեայի 1950 թվականի դեկտեմբերի 14-ի 428 (V) բանաձև

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԵՐԱԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի

գրասենյակի

Գաղափար

ՆԱԽԱԲԱՆ

Կազմված Միավորված ազգերի կազմակերպության

Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ)

գրասենյակի կողմից

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1949 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 319 (IV) բանաձևով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան որոշեց 1951 թվականի հունվարի 1-ին հիմնել Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ:

Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Կանոնադրյալուն ընդունվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 1950 թվականի դեկտեմբերի 14-ին՝ որպես թիվ 428 (V) բանաձևի հավելված: Այս հրատարակության 4-րդ էջում ներկայացված այդ բանաձևում Ասամբլեան նաև կառավարություններին կոչ է արել համագործակցել Գերագույն հանձնակատարի հետ՝ գրասենյակի իրավասության ներքո գտնվող փախստականների հետ կապված նրա գործառնությունների իրականացման գործում: Կանոնադրյալի համաձայն՝ Գերագույն հանձնակատարի աշխատանքը մարդասիրական է և հասարակական և ունի միանգամայն ոչ ֆալսեական բնույթ:

Գերագույն հանձնակատարի գործառնությունները սահմանված են Կանոնադրյալի մեջ և Գլխավոր ասամբլեայի կողմից ավելի ուշ ընդունված տարբեր բանաձևերում: Գերագույն հանձնակատարի գրասենյակին առնչվող՝ Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից ընդունված բանաձևերը մտոչելի են ՄԱԿ ՓԳՀ-ի www.unhcr.org կայքէջում:

Գերագույն հանձնակատարը Գլխավոր ասամբլեային ներկայացնում է ամենամյա զեկույցներ¹: Կանոնադրության 4-րդ պարբերության համաձայն՝ Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից ստեղծվեց Փախստականների հարցերով խորհրդատվական կոմիտե² և հետագայում վերակազմավորվեց նրպես Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հիմնադրամի (UNREF) գործադիր կոմիտե³: Վերջինս 1958 թվականին վախարկելեց Գերագույն հանձնակատարի ծրագրի Գործադիր կոմիտեով⁴:

Գործադիր կոմիտեի անդամներն ընտրվել են Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից՝ ապահովելով հնարավորինս լայն աշխարհագրական ընդգրկում՝ ներառելով այն պետությունները, որոնք հետաքրքրվածություն և նվիրվածություն են դրսևորել վախստականների խնդիրների լուծման հարցում: Իր տեխնիկական առաջադրանքի շրջանակներում Գործադիր կոմիտեն, մասնավորապես, վերանայում և հաստատում է Գերագույն հանձնակատարի գրասենյակի նյութական աջակցության ծրագրերը և Գերագույն հանձնակատարի պահանջով նրան խորհրդատվություն է տրամադրում Կանոնադրությամբ սահմանված իր գործառույթների իրականացման վերաբերյալ: Գործադիր կոմիտեն ի սկզբանե բաղկացած էր 24 պետություններից: 2010 թվականի դրությամբ անդամակցող պետությունների թիվը հասնում էր 79-ի՝ ներառելով հետևյալ պետությունները. Ալժիր, Արգենտինա, Ավստրալիա, Ավստրիա, Բանգլադեշ, Բելգիա, Բենին, Բրազիլիա, Կանադա, Չիլի, Չինաստան, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Փղոսկրի Ափ, Կիպրոս, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն, Դանիա, Ջիբութի, Էկվադոր, Եգիպտոս,

¹ Գլխավոր ասամբլեայի 2004 թվականի փետրվարի 24-ի թիվ 58/153 բանաձև

² Տնտեսական և սոցիալական խորհրդի 1951 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 393 (XIII) B բանաձև

³ Գլխավոր ասամբլեայի 1954 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 832 (IX) բանաձևի համաձայն ընդունված՝ Տնտեսական և սոցիալական խորհրդի 1955 թվականի մարտի 31-ի թիվ 565 (XIX) բանաձև

⁴ Գլխավոր ասամբլեայի 1957 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1166 (XII) բանաձև և Տնտեսական և սոցիալական խորհրդի 1958 թվականի ապրիլի 30-ի թիվ 672 (XXV)

Ըստոնիա, Եթովպիա, Ֆիլիպինյան, Ֆրանսիա, Գերմանիա, Գոնա, Հունաստան, Գվինեա, Վատիկան, Հունգարիա, Հնդկաստան, Իրանի Իսլամական Հանրապետություն, Իսլանդիա, Իսրայել, Իտալիա, Ճապոնիա, Հոնգոնգ, Քենիա, Լիբանան, Լեատո, Լյուքսեմբուրգ, Մադագասկար, Մեքսիկա, Չեռնոգորիա, Մարտիկո, Մոզամբիկ, Նամիբիա, Նիդերլանդներ, Նոր Զելանդիա, Նիկարագուա, Նիգերիա, Նորվեգիա, Պակիստան, Ֆիլիպիններ, Լեհաստան, Պորտուգալիա, Կորեայի Հանրապետություն, Մալդիվյան Հանրապետություն, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սերբիա, Սլովենիա, Սոմալի, Հարավային Աֆրիկա, Իսպանիա, Սուդան, Շվեդիա, Շվեյցարիա, Թաիլանդ, Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետություն, Թունիս, Թուրքիա, Ուգանդա, Միացյալ Թագավորություն, Տանզանիայի Միացյալ Հանրապետություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Վենեսուելա (Բուլիվարյան Հանրապետություն), Եմեն և Զամբիա:

Միավորված ազգերի կազմակերպության Փախտականների հարցերով առաջին գերագույն հանձնակատարը Գերբիտ Յ. վան Հյովեն Գուպիարթն էր՝ Նիդերլանդներից (1951-1956): Նրան հաջորդեցին Ավգուստ Ռ. Լինդալը՝ Շվեյցարիայից (1957-1960), Ֆելիս Ենայերը՝ Շվեյցարիայից (1961-1965), Սապրուպին Ագա Խանը՝ Իրանից (1966-1977), Պոլ Հարտլինգը՝ Դանիայից (1978-1985), Ժան-Պիեռ Օկեն՝ Շվեյցարիայից (1986-1989), Տորվալդ Ստոլտենբերգը՝ Նորվեգիայից (1990 թվականի հունվարից-1990 թվականի նոյեմբեր), Սաբալո Օգաստան՝ Ճապոնիայից (1991-2000), Ռուուզ Լյուբերսը՝ Նիդերլանդներից (2001-2005) և Անտոնիո Գուայերեսը՝ Պորտուգալիայից (2005-մինչ օրս):

ՄԱԿ ՓԳՀ-ի կենտրոնակայանը գտնվում է Ժնևում, Շվեյցարիա: Գերագույն հանձնակատարի կողմից ներկայացուցիչներ և թղթակիցներ են նշանակվել աշխարհի շուրջ 125 երկրներում:

Ժնև, հոկտեմբեր, 2010 թվական

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 428 (V) ԲԱՆԱԶԵՎ

14 դեկտեմբերի, 1950 թվական

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՆՆ,

հաշվի առնելով 1949 թվականի դեկտեմբերի 3-ի իր թիվ 319 A (IV) բանաձևը,

1. հաստատում է սույն բանաձևի հավելվածը, որը հանդիսանում է Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Կանոնադրությունը,

2. կոչ է անում կառավարություններին՝ համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հետ՝ գրասենյակի իրավասության ներքո գտնվող փախստականների հետ կապված նրա գործառնությունների իրականացման գործում, մասնավորապես՝

ա) փախստականների պաշտպանությունն ապահովող միջազգային կոնվենցիաների մասնակից դառնալով և նման կոնվենցիաների շրջանակներում այդ պաշտպանության իրականացմանն ուղղված անհրաժեշտ հայլեր ձեռնարկելով,

բ) փախստականների վիճակի բարելավման և պաշտպանության կարիք ունեցող փախստականների թվի կրճատման համար նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով գերագույն հանձնակատարի հետ հասուկ համաձայնագրեր կնքելով,

գ) փախստականներին, ներառյալ՝ ծայրահեղ աղբատուրյան մեջ գտնվողներին իրենց տարածքներ ընդունելով,

դ) գերագույն հանձնակատարին աջակցելով կամավոր հայրենադարձության խթանմանն ուղղված նրա նախաձեռնություններում,

ե) խթանելով փախստականների միաձուլումը, հատկապես՝ դասակարգելով նրանց ֆալսեֆալսության շեղումներ,

զ) փախստականներին տրամադրելով նամվարդական և այլ փաստաթղթեր, որոնք սովորաբար տրամադրվում են այլ օտարերկրացիների՝ իրենց ազգային իշխանությունների կողմից, հատկապես՝ նրանց բնակության հաստատումը դասակարգելով փաստաթղթեր,

է) փախստականներին թույլատրելով սեղավորվել իրենց՝ հատկապես բնակություն հաստատելու համար անհրաժեշտ գույքը,

ը) Գերագույն հանձնակատարին տեղեկություններ տրամադրելով փախստականների թվի և վիճակի, ինչպես նաև նրանց վերաբերյալ օրենքների և կանոնակարգերի մասին:

3. Գլխավոր ֆարսուղարից պահանջում է սույն բանաձևը, կից ներկայացված հավելվածի հետ միասին, ուղարկել նաև Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացող պետություններին՝ նպատակ ունենալով բանաձևի իրականացման հարցում ձեռք բերել նրանց համագործակցությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով

գերագույն հանձնակատարի գրասենյակի Կանոնադրություն

ԳԼՈՒԽ I

Ընդհանուր դրույթներ

1. Գործելով Գլխավոր ասամբլեայի ղեկավարությամբ՝ Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը ստանձնում է սույն Կանոնադրության գործողության ոլորտում ընդգրկված փախստականների համար Միավորված ազգերի կազմակերպության հովանավորության ներքո միջազգային պաշտպանություն ապահովելու եւ փախստականների խնդրի համար կիմնական լուծումներ որոնելու գործառույթը՝ աջակցություն տրամադրելով կառավարություններին եւ, շահագրգիռ կառավարությունների հավանության դեպքում, մասնավոր կազմակերպություններին՝ նման փախստականների կամավոր հայրենադարձությունը կամ նոր ազգային համայնքներին նրանց միաձուլումը խթանելու նպատակով:

Իր գործառույթների իրականացման ընթացքում, մասնավորապես՝ զժլարությունների առաջացման դեպքում, եւ, օրինակ, կապված այս անձանց միջազգային կարգավիճակին առնչվող որեւէ հակասության կես, Գերագույն հանձնակատարը դիմում է Փախստականների հարցերով խորհրդատվական կոմիտեին, երբ այն ստեղծվել է, խնդրելով վերջինիս եզրակացությունը:

2. Գերագույն հանձնակատարի աշխատանքն ունի միանգամայն ոչ ֆալսական բնույթ. այն մարդասիրական է եւ սոցիալական եւ, որպէս կանոն, ռոնչվում է փախտականների խմբերին եւ կատեգորիաներին:

3. Գերագույն հանձնակատարը հետեւում է Գլխավոր ասամբլեայի կամ Տնտեսական եւ սոցիալական խորհրդի կողմից իրեն տրված ֆալսականության վերաբերյալ հրահանգներին:

4. Խնդրի շուրջ Գերագույն հանձնակատարի տեսակետը լսելուց հետո Տնտեսական եւ սոցիալական խորհուրդը կարող է որոշում կայացնել Փախտականների հարցերով խորհրդատվական կոմիտե ստեղծելու մասին, որը բաղկացած կլինի Միավորված ազգերի կազմակերպության անդամ եւ ոչ անդամ պետությունների ներկայացուցիչներից, որոնք պետք է ընտրվեն փախտականների խնդիրների լուծման հարցում իրենց գրասենյակում հետաքրքրվածության եւ նվիրվածության հիման վրա:

5. Ոչ ուշ, քան իր հերթական ութերորդ նստաշրջանի ընթացքում, Գլխավոր ասամբլեան վերանայում է Գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ կապված պայմանավորվածությունները՝ գրասենյակի գործունեությունը 1953 թվականի դեկտեմբերի 31-ից հետո շարունակելու վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

ԳԼՈՒԽ II

Գերագույն հանձնակատարի գործառույթները

6. Գերագույն հանձնակատարի իրավասությունը տարածվում է ցանկացած անձի վրա, ով.

Ա. (i) փախստական է համարվել՝ ըստ 1926 թվականի մայիսի 12-ի եւ 1928 թվականի հունիսի 30-ի համաձայնագրերի կամ ըստ 1933 թվականի հոկտեմբերի 28-ի եւ 1938 թվականի փետրվարի 10-ի կոնվենցիաների, 1939 թվականի սեպտեմբերի 14-ի արձանագրության կամ Փախստականների հարցերով միջազգային կազմակերպության կանոնադրության,

(ii) մինչեւ 1951 թվականի հունվարի 1-ը տեղի ունեցած իրադարձությունների եւ ռասայի, կրոնի, ֆաղաֆացիության կամ ֆաղաֆական կարծիքի հարելու պատճառով հետապնդվելու եկնաձայնակաձայնակ երկրուղի հետեւանում գտնվում է իր ֆաղաֆացիություն երկրից դուրս եւ անկարող է, կամ՝ նման երկրուղի պատճառով կամ որեւէ այլ (բացի անձնական հարմարությունը) պատճառով չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ նա, ով չունենալով ֆաղաֆացիություն եւ գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս՝ անկարող է, կամ՝ նման երկրուղի պատճառով կամ որեւէ այլ (բացի անձնական հարմարությունը) պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ:

Փախստական համարվելու իրավունքի մասին Փախստականների հարցերով միջազգային կազմակերպության կողմից իր գործունեության ընթացքում կայացրած որոշումները չեն խոչընդոտում այն անձանց փախստականի կարգավիճակ տրամադրելուն, ովքեր բավարարում են սույն պարբերության պայմանները,

Գերագույն հանձնակատարի իրավասությունը դադարում է կիրառվել վերոնշյալ Ա բաժնում սահմանված ցանկացած անձի նկատմամբ, եթե նա.

- ա) կամավոր կերպով կրկին օգտվել է իր ֆաղաֆացիության երկրի պաշտպանությունից, կամ
- բ) կարգրած լինելով իր ֆաղաֆացիությունը, կամավոր կերպով կրկին ձեռք է բերել այն, կամ

գ) ձեռք է բերել նոր ֆազաբացիություն եւ օգտվում է իր նոր ֆազաբացիության երկրի պաշտպանությունից, կամ

դ) կամավոր կերպով վերահաստատվել է այն երկրում, որը լինել էր կամ որից դուրս գտնվում էր հետապնդման երկյուղի պատճառով, կամ

ե) այլևս չի կարող ներկայացնել հիմնավորումներ իր ֆազաբացիության երկրի պաշտպանությունից հրաժարվելը շարունակելու համար, որովհետեւ այն հանգամանքները, որոնց կապակցությամբ նա հանաչվել էր փախստական (բացի անձնական հարմարությունից), դադարել են գոյություն ունենալ: Ջուս սոստեսական բնույթի պատճառները չեն կարող վկայակոչվել, կամ՝

զ) լինելով ֆազաբացիություն չունեցող անձ՝ նա այլևս չի կարող հիմնավորումներ ներկայացնել այդ երկիր վերադառնալուց հրաժարվելը շարունակելու համար, քանի որ այն հանգամանքները, որոնց կապակցությամբ նա հանաչվել է փախստական (բացի անձնական հարմարությունից), դադարել են գոյություն ունենալ, եւ նա ի վիճակի է վերադառնալ իր նախկին մշտական բնակության երկիրը,

Բ. Ցանկացած այլ անձ, ով գտնվում է իր ֆազաբացիության երկրից դուրս, կամ, եթե չունի ֆազաբացիություն, իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, քանի որ ունի կամ ուներ իր ուսայի, կրոնի, ազգության կամ ֆազաբանական կարծիքի հարելու պատճառով հետապնդվելու հիմնավորված երկյուղ եւ անկարող է կամ նման երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր ֆազաբացիության երկրի կառավարության պաշտպանությունից, կամ, եթե չունի ֆազաբացիություն, վերադառնալ իր նախկին մշտական բնակության երկիր:

7. Հնդ որում, Գերագույն հանձնակատարի իրավասությունը, վերահսկող **6**-րդ պարբերությունում սահմանվածի համաձայն, չի տարածվում այն անձի վրա,

ա) ով մեկից ավելի երկրի ֆազաբացի է, եթե չի բավարարում նախորդ պարբերության դրույթների պահանջները՝ կապված այն երկրներից յուրաքանչյուրի հետ, որոնց ֆազաբացին է նա, կամ

բ) ով այն երկրի իրավասու մարմինների կողմից, որտեղ նա ունեցել է բնակություն վայր, նախազվել է այդ երկրի ֆազաբացիությունն ունենալու հետ կապված իրավունքներ ու պարտավանություններ ունեցող, կամ

գ) ով շարունակում է պաշտպանություն կամ օգնություն ստանալ Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմիններից կամ գործակալություններից, կամ

դ) ում վերաբերյալ լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա կատարել է էֆսորադիցիայի (հանցագործ(ներ)ին հանձնելու) մասին պայմանագրերի դրույթներում սահմանված հանցագործություն կամ Միջազգային զինվորական տրիբունալի կոնյունի խարտիայի VI հոդվածում նշված կամ Մարքու իրավունքների համընդհանուր հոչակագրի 14-րդ հոդվածի 2-րդ պարբերության դրույթներով սահմանված հանցագործություն* :

8 . Գերագույն հանձնակատարն ապահովում է իր գրասենյակի իրավասության ներքո գտնվող փախստականների պաշտպանությունը.

*Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 A (III) բանաձևը

ա) փախստականների պաշտպանությանն առնչվող միջազգային կոնվենցիաների կնքմանը և վավերացմանը նպաստելով, դրանց իրականացումը վերահսկելով և դրանցում փախստաբյուրոներ կատարելու առաջադիվեր ներկայացնելով,

բ) կառավարությունների հետ հատուկ համաձայնագրերի կնքման միջոցով փախստականների վիճակի բարելավման և պաշտպանության կարիք ունեցող փախստականների թվի կրճատման համար նախատեսված միջոցառումների իրականացմանը նպաստելով,

գ) փախստականների կամավար հայրենադարձության կամ նոր ազգային համայնքներին միաձուլման խթանման նպատակով կառավարության և մասնավոր կազմակերպությունների նախաձեռնություններին աջակցություն տրամադրելով,

դ) պետությունների տարածքներ փախստականների, ներառյալ՝ ծայրահեղ ազդեցության մեջ գտնվողների ընդունվելուն նպաստելով,

ե) փախստականների համար իրենց՝ հատկապես բնակություն հաստատելու համար անհրաժեշտ գույքը տեղափոխելու համար թույլտվություն ստանալուն ուղղված ջանքեր գործադրելով,

զ) կառավարություններից՝ իրենց տարածքներում գտնվող փախստականների բնակի և վիճակի, ինչպես նաև նրանց վերաբերյալ օրենքների և կանոնակարգերի մասին տեղեկություններ ձեռք բերելով,

է) կառավարությունների և դրանց շահագրգիռ միջկառավարական կազմակերպությունների հետ սերտ կապ պահպանելով,

ը) փախստականների հարցերով զբաղվող մասնավոր կազմակերպությունների հետ՝ իր հայեցողությամբ առավելագույնս արդյունավետ կերպով կապ հաստատելով,

բ) շահագրգիռ մասնավոր կազմակերպությունների նախաձեռնությունների և վախժատականների բարեկեցության ապահովմանն ուղղված միջոցառումների միջև համաձայնեցված գործողությունների իրականացմանը նպաստելով:

9. Գերագույն հանձնակատարը զբաղվում է լրացուցիչ գործունեությամբ՝ ներառյալ հայրենադարձության և բնակչության հաստատման հետ կապված խնդիրներով՝ Գլխավոր ասամբլեայի կողմից նման որոշում կայացնելու դեպքում՝ իր տրամադրության ներքո գտնվող սեփականության շինություններում:

10. Գերագույն հանձնակատարը տնօրինում է վախժատականների աջակցության համար իր կողմից ստացված պետական և մասնավոր բուրք ֆինանսական միջոցները և պահպանում է պետական և մասնավոր և, նպատակահարմարության դեպքում, պետական գործակալությունների միջև, որոնք, իր համագործակցությամբ, առավելագույն և համապատասխանում նման աջակցության իրականացման համար:

Գերագույն հանձնակատարը կարող է մերժել ցանկացած առաջարկ, որն իր կարծիքով կլինի ոչ նպատակահարմար, կամ որը հնարավոր չի լինի օգտագործել:

Գերագույն հանձնակատարը ֆինանսական միջոցներ ստանալու խնդրահրահով չի դիմում կառավարություններին կամ հանդես գալիս ընդհանրական կոչով՝ առանց Գլխավոր ասամբլեայի նախնական հավանության:

Իր ամենամյա զեկույցում, Գերագույն հանձնակատարը ներառում է հաշվետվություն այս բնագավառում իր կողմից իրականացված գործողությունների վերաբերյալ:

11. Գերագույն հանձնակատարն իրավունք ունի Գլխավոր ասամբլեային, Տնտեսական և սոցիալական խորհրդին և դրանց օժանդակ մարմիններին ներկայացնել իր տեսակետները:

Գերագույն հանձնակատարը, Տնտեսական և սոցիալական խորհրդի միջոցով, տարեկան կարվաճափ զեկույց է ներկայացնում Գլխավոր ասամբլեային. նրա զեկույցը ֆինանսավորում է որպես Գլխավոր ասամբլեայի օրակարգի առանձին հարց:

12. Գերագույն հանձնակատարը կարող է համագործակցության հրավիրել տարբեր մասնագիտացված գործակալություններին:

ԳԼՈՒԽ III

Կառուցվածքը և ֆինանսները

13. Գերագույն հանձնակատարն ընտրվում է Գլխավոր ասամբլեայի կողմից՝ Գլխավոր ֆարտուղարի առաջադրմամբ: Գերագույն հանձնակատարի նշանակման ժամկետներն առաջարկվում են Գլխավոր ֆարտուղարի և հաստատվում Գլխավոր ասամբլեայի կողմից: 1951 թվականից ի վեր՝ գերագույն հանձնակատարն ընտրվում է երեք տարի ժամկետով:

14. Գերագույն հանձնակատարը նույն ժամկետով նշանակում է Գերագույն հանձնակատարի տեղակալին, ուն ֆազաֆացիոթյունը պետք է տարբեր լինի Գերագույն հանձնակատարի ֆազաֆացիոթյունից:

15. ա) Գերագույն հանձնակատարի գրասենյակի աշխատակազմը նշանակվում է Գերագույն հանձնակատարի կողմից՝ տրամադրված բյուջեային հատկացումների սահմաններում. այն իր գործառույթների իրականացման հարցում հաշվետու է Գերագույն հանձնակատարին:

բ) Այս աշխատակազմը համալրվում է Գերագույն հանձնակատարի գրասենյակի նպատակներին հավատարիմ անձանցով:

գ) Աշխատակազմի համար որպես աշխատանքային պայմաններ են կիրառվում Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված աշխատակազմի կանոնակարգերով և Գլխավոր ֆարտուղարի կողմից դրանց համաձայն կրապարակված կանոններով սահմանված աշխատանքային պայմանները:

դ) Կարող է նաև դրույթ նախատեսվել առանց վարձատրության աշխատող աշխատակիցների ներգրավումը թույլտարելու համար:

16. Գերագույն հանձնակատարը փոխատակահների բնակարանային երկրների կառավարությունների հետ խորհրդակցում է այդ երկրներում ներկայացուցիչներ նշանակելու անհրաժեշտության հարցի շուրջ:

Նման անհրաժեշտությունն ընդունող ցանկացած երկրում կարող է նշանակվել այդ երկրի կառավարության կողմից հաստատված ներկայացուցիչ: Վերը նշվածի հիման վրա՝ նույն ներկայացուցիչը կարող է ծառայել մեկից ավելի երկրներում:

17. Գերագույն հանձնակատարը եւ Գլխավոր ֆարտուղարը համապատասխան միջոցներ են ձեռնարկում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ միմյանց հետ կապի հաստատումը եւ խորհրդատվություն տրամադրումն ապահովելու համար:

18. Գլխավոր ֆարտուղարը, բյուջեի հնարավորությունների սահմաններում, Գերագույն հանձնակատարին ապահովում է բոլոր անհրաժեշտ հարմարություններով:

19. Գերագույն հանձնակատարի գրասենյակը գտնվում է Ժնևում, Շվեյցարիա:

20. Գերագույն հանձնակատարի գրասենյակը ֆինանսավորվում է Միավորված ազգերի կազմակերպության բյուջեի համաձայն: Միավորված ազգերի կազմակերպության բյուջեով չի նախատեսվում որևէ այլ ծախս, քան Գերագույն հանձնակատարի գրասենյակի բնականոն աշխատանքի ապահովման հետ կապված վարչական ծախսերը, եթե Գլխավոր տասնբլեան հետագայում այլ որոշում չի կայացնում, իսկ Գերագույն

հանձնակատարի գործունեության հետ կապված մյուս բոլոր ծախսերը ֆինանսավորվում են կամավոր ներդրումների միջոցով:

21. Գերագույն հանձնակատարի գրասենյակի ղեկավարումն իրականացվում է՝ հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության ֆինանսական կանոնակարգերը եւ Գլխավոր ֆարսուղարի կողմից դրանց համաձայն հրապարակված ֆինանսական կանոնները:

22. Գերագույն հանձնակատարի՝ ֆինանսական միջոցների հետ կապված գործարքների նկատմամբ Միավորված ազգերի կազմակերպության Աուդիտորների հանձնաժողովի կողմից իրականացվում է աուդիտ՝ պայմանով, որ հանձնաժողովը կարողանա ընդունել աուդիտի ենթակված հաշիվներն այն գործակալություններից, ում հատկացվել են ֆինանսական միջոցները: Նման ֆինանսական միջոցները վստահելու եւ դրանցից հատկացումներ կատարելու հետ կապված վարչական կարգավորումները համաձայնեցվում են Գերագույն հանձնակատարի եւ Գլխավոր ֆարսուղարի միջև՝ Միավորված ազգերի կազմակերպության ֆինանսական կանոնակարգերի եւ Գլխավոր ֆարսուղարի կողմից դրանց համաձայն հրապարակված ֆինանսական կանոնների համաձայն: